ԳԼՈՒԽ ՃԺԴ.

Ամենայն եկեղեցւոյ կազմել զտանի երկու սեղանս վասն մատուցման սրբոյ պատարագի, մի 'ի սեղանոյ կատարեսցի պատարագն ժամ արշաւալոյսի որում ընդունեսցեն Օրհնութիւն ծերք, պառաւունք և ալևորք, և 'ի վերայ միոյ սեղանոյ մատուսցի պատարագ եօթն ժամ առաւօտու, որում ընդունեսցեն զօրհնութիւն երիտասարդք կանայք և կուսանք, մի՛ ոք տիկին, և կամ աղախինք, և հասարակ դստերք ժողովրդոց և մանկունք մի՛ ելցէ 'ի տանէ և ընակութենէ իւրմէ առաջ քան ծագելոյ արեգական, բաց 'ի տօնից սրբոց ընտանեօք միաբան։

ԳԼՈՒԽ ՃԺԵ.

Ով ոք գտցի յանկարծակի մէջ տան և ընակութեան իւրոյ 'ի դիշերի յետ ինն ժամ երեկոյեան ոմն սուսերօք վառեալ, կարող է սպանանել նմա, և արիւն նորայ 'ի ձեռանէ սպանողի մի՛ խնդրեսցի։

ԳԼՈՒԽ ՃԺԶ.

Ամենայն ոք որ կամեսցի հիմն տան արկանել մէջ քաղաքի ընկալցի սահման երկրաչափէն քաղաքի։